



ՀԱՏՈՐ ԻԷ. ՊՐԱԿ Ա.

1889

ՅԱՆ. ՓԵՏՐ. ՄԱՐՏ

Հ Ա Ն Դ Է Ս Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

ՅԻ ԻՒՐ ԲԱԶՄԱԳՄԱՐՆԱՆ ՓԱՂՏԵՒԻՐ



ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԱՅՈՑ գարուծեան անդրանիկ ծնունդն և ամենէն աւելի հոյակապ և գեղեցիկ երկատիրութիւնը, զոր քաղաքարեան հնութեան չեա՛ մեծագոյն դէպք ևս, այսինքն է. Հայաստանի դարձն 'ի քրիստոնէութիւն' ՚ի ձեռն մեծի Լուսաւորչին՝ նուիրական գործեցին, և Պատմութիւն Աղաքանգեղայ, Յիրուի, այս բանին ոչ ոք տարակուսած է երբէք. մանաւանդ թէ այս մեծագոյն և փառապանծ յօրինուածութեան համեմատ՝ միշտ մեծ եղած է և տոհմային մատենագրաց համարումը, որում կը ձայնակցին այսօր 'ի մասնաւորի նաև քննասերք սուսումնասենչ Եւրոպայ: Բայց թէ Ագաթանգեղոս, որուն ընծայած են նախնիք մեր այս գրուածս՝ իցէ ստուգիւ լեալ ժամանակից և սկանառես գրիչ այն դիպաց՝ որք կ'աւանդին սատ, եթէ ոչ, — արդեօք նորա աւանդածներն իցեն թովանդակապէս երբորք դարուն վերջերն և չորսորդին սկիզբներ կատարուած պատմական և հարազատ իրողութիւնը, եթէ ընդհակառակն կան յայնմ՝ նաև յետագոյն ժամանակաց եկամուտան հարազատութիւններ, — երկուստեք արուծիւնս այս գրեցաւ ստուգիւ չայերէն բարբառով և վանն Հայոց, եթէ այլապէս ամենեկին եզն իսկզբանէ ելք իրացն: Արդ այս բաներուս վրայ սարակոյններ յայանելու և ուշի ուշով քննելու ոչ միայն լիութի իրաւունք՝ այլ և պարաքն անգամ ունին յանձին ժամանակիս քննադատութեանն՝ ևս առաւել ղզգային մատենագրութեան պարագայ քննաւերք, որովչետև ոչ միայն քրիստոնէայ Հայաստանի եկեղեցական պատմութեան և վարդապետութեան, այլ նոյն իսկ չեթանսիկ Հայաստանի

գին և գիշանուէր աւանդութեանց հիմն այն է: Ի՛նչպէս կարէ որ այն աւանդութեանց վրայ վտասահիլ և իբր ի վերայ հիման հետզհետէ նորանոր շէնքեր ևս շինել՝ հայկական գաղութեան հրաշալիքաւ վեր բարձրացնելու աղագուս, տասնց լաւ գիտ նալու թէ որքան հաստատութիւն ունի այդ հիմը: Հայկեանս գրոհի նորախոյզ և ուսումնասինչ սերունդն ի՛նչպէս պիտի կարենայ յապէցնել անոք իւր մտաց ծաբուն, եթէ ապահով չլինի թէ արդեօք այդ երկասիրութեան մեզ աւերգածներն յակնակիրս և անխառն յարբերաց յառաջ քան և թէ ՚ի խարդախեցոց: Ահաւասիկ առաջին պատճառ կամ շարժառիթ իմ այս քննագտութեանս: Երկրորդ պատճառն եղած է սոհմային և օտարազգի մտեկնարաց այլ և այլ ժամանակաց մէջ իրարմէ արբեր կամ մանաւանդ թէ գլխովին իրարու հակառակ կարծեօք և էնթագրութեամբ զմիտ բազմաց շփոթելն. այնու, զի հինք յաճախ իրենց ժամանակին և նպատակին յարմար դիրւահաշուանութեամբ՝ քան թէ նորոք իմն և աջալուրջ քննութեամբ՝ իբրև արգէն իսկ ապացուցուած ընդունեցան զամենայն, նոյն իսկ զոչ արժանիս հաւատարմութեան. իսկ նորք՝ ընդհակառակն, քան զսփին կարի անառաւութեան և յանգուզն զաւսման բոլորովին հակառակ որքանքներ և վճիռներ արտաբերեցին, որոց մասն և աւերմունքն աւելի եղան քան կարծեցեալ նորագութիւնները:

Իսրանիոս, Պայտերրոզ և ՚ի մասնաւորի Ստիլանդի՜ եղան, որք զառաջինն տարակուսեցան Աքաթանդեղոսի և նորա պատմութեան հարազատութեան վրայ: Վերջինն՝ Մետափրաստէսի ձեռքով մեղի թողած Աքաթանդեղեայ յոյն օրինակը՝ լատիներէն հրատարակութեամբ ծանոյց ուսումնասիրաց, և անառաւութեամբ կոչելով շոյն ՚ի դատ՝ իւր ընտիր ծանօթութիւններովն և սուր գիտողութեամբք մեծ արգիւնք ունեցաւ, այնպէս որ կարելի է սակ թէ Աքաթանդեղոսի գրոց քննութեան առաջին քայլը նա ըրաւ:

Եես նորա եղաւ արգի հայ պատմաբանից հայրն Հ. Միքայէլ Չամչեան՝, որ իւր ընդարձակած աւազ հմտութեամբը. ըսնաց ոչ միայն Աքաթանդեղոսի վաւերակա նութիւնն հաստատել անոր յաջրգող սոհմային պատմագրաց վկայութիւններով, այլ նոյն իսկ իւր ժամանակի հօրիդոնէն վեր հեռատեսութեամբ լուծել իւր նախորդին անընծանելի կարծուած գծուարութիւնը. բայց, յամենայնի պաշտպանողական գրութիւնն ՚ի վար արկանելով, այնպէս որ նորա հայրենասիրութիւնն և ազգային ինքնագարծութիւնն աւելի գեր խողացեր են անդ, քան թէ ժամանակիս անառաւ քննութիւնն և լոկ շխարհասիրութիւնն: Այս վերջին պարագայս եթէ ազգային մտեկնարաց համաձայնակ ախա համարիցի որ և եթէ առանձին շարտարութիւն իմն բազմահմուտ Միխիթարեանին ՚ի զգեանել զախոյանան իւր, պէտք է ըսել թէ այնքան զորեղ է և համազեցուցիչ, որ եթէ Գիսուսեան անպարտելի գիտնականը սորա գրութիւնն իւր գիմացն ունենալու բողոքին հանգիպած լինէր յառաջադոյն, գուցէ թէ այնուհետև ոչ արարակուսէր Աքաթանդեղեայ պատմութեան հարազատութեան վրայ, և կամ կարի շփաւորեր իւր տարակուսանաց թիւն. որովհետև Ստիլանդի ինքնին որոշակի կը խոստովանի, թէ արտաքին մտեկնարաց համաձայնութիւնը

1. Bolland. Acta Sanctorum. Septemb. 30. Tom. VIII. 320 et seq. Acta Sancti Gregor. auctore Agathangelo; ex Bibliotheca Medicea Florent. S. Laurentii, interprete Ioanne Stilling.

2. Πρόλογος Ἀγαθαγγέλου ἐν οἷς καὶ τὸ μαρτύριον αἰγίου Γρηγορίου.

3. Պատմ. Հայոց Կ. Ա. էջ 688:

բուսական ապացոյց են նորա հարազատութեան, եթէ ժամանակաւ մերձաւոր եղած լինէին, բայց գժտազգաբար զարական խարոցը նոցա հետ՝ զիս ևս կը թուի հեռացնել անտի, իսկ Չամչեան այգ մեծ խարոցն իսկ շտանացեր է հարթել, գրեթէ Աբաթմանգեղեցի ժամանակակից և կամ ժամանակաւ մերձաւոր այս ժամանակաբար խուժք մի՛ ՚ի վէպուսթիւն կոչելով: Սակայն այսու համգերձ, պէտք է տակ թէ տոհմային մասենագրութեան այգ ճիս զինարանն իսկ՝ արգի քննութեանն առջև իբրև ժանգաճար զէնքեր կը ներկայացնէ Չամչեան, որոնք չպաշտպանելէն զաս՝ կարող են փաստարբեր ևս լինել գործածողաց, որովհետև նոցա հարազատութիւնը յառաջագոյն չէ ապացուցած, Բաց աստի, նա իւր ժամանակի սահող և սայթաքող հոտանքներէն մղուելով շատ և շատ էական խնդիրներ (յորոց մին է Աբաթմանգեղոսի րնագրի և Թարգմանութեանց խնդիրն) հարեանցի նկատած է, կամ լաւ ևս, գլխավիճակաւ, ևսնց նկատողութեան թուգած, որոնք ցայսօր եզան ոճանց քար գայթակղութեան և այլը իբրև նեցուկ ապահինութեան:

Յամին 1843 Մխիթարեան Հարց ձեռքով և Թոմասեոյ իտալացւոյ սրբագրութեամբ եղած Աբաթմանգեղոսի իտալերէն ճրատարակութեան յառաջաբանին հեղինակը, թէպէտև մի քանի օգտակար տեղեկութիւններ կը թուի յաւելուլ Չամչեանի պաշտպանած գառնի՛ ՚ի նպաստ, բայց քրոց քնագրի և Թարգմանութեան խնդրոց մասին՝ անկէ աւելի քայլ մի առած չէ, այլ պարզապէս նորա ընտրած գառնի վրայ կէնտրուլ միայն որոշակի իւր գրուցը ցուցուցեր է, անելով թէ հայերէն գրուած է այն: Ընթացողութիւն մի՛ որ չկարէ գոհացնել զըք. առութիւն լոկ՝ առանց ապացուցութեան:

Չամչեանի կրօնակից վիեճակաւ Մխիթարեանց նշանաւոր Հարց մին, այսինքն է հանրածանօթ Հ. Յ. Գաթրճեանի՝ իւր աշտուրը և ճշգող մտք ունելով՝ միտմով ձեռնի քննասիրութեան կարկինն, իսկ ՚ի միտումն՝ արգէն իսկ Չամչեանէն ձգուած տոհմային և օտարազգի պատմագրաց միութեան լարը պատշաճեցնելով Աբաթմանգեղեցի պաշտպանութեան յորինուածութեան և նոյն գլխաւոր գիտաց, քաջ չափեց զանոնք և պահպանել ուզէց ոչ միայն օտար յարձակմանց դէմ, այլ յետագայից իսկ լուսառու լամբտրներ պատրաստեց, քայլ մի ևս յառաջելու Աբաթմանգեղոսի պատմութեան խորհրդաւոր մթութեան և լարիւրիւթոսի մեջ. սակայն նորա քնագրի և Թարգմանութեան խնդիրներն, մասնաւոր Գրիգորի կարծեցեալ վարդապետութեան հարազատութեան կամ անհարազատութեան քող՝ և ոչ իսկ Ծայրիւ մասին ուզէց պարզել, այլ նոյն իմաստից և խորհրոց համառօտ տեսութեամբը գոհ եղաւ. միայն գուցէ ոչ այնքան իւր ժամանակի պահանջմանց հետեւելով, որքան իւր մասուրբական հորիզոնին վերայ ապագայ քննագրատութեան նորանշյլ աստղը գեւ պայծառ Ծագած չլինելուն պատճառաւ, և կամ մասնաւոր իւր առաջարկեալ գրութեանէն օտար վարկանելով զայնս:

Ընի սպա յապարկոց կեալ Վ. Լանգլուս, Գաղղիացի հայագիտիս համար կարելի է ըսել թէ ստուգիւ մի նոր քայլ առաւ, երբ իւր ճրատարակութեան նախալուզի մեջ ուղղակի շօշափել ուզէց Աբաթմանգեղեցի հարազատութեան կամ անհարազատութեան, քնագրի և Թարգմանութեան նշանաւոր խնդիրներն, յորմէ կը կատուի, ըստ իս. Գորգեան հանգուցէն աւելի Աբաթմանգեղեցի քրոց բազմակնձինն

1. Տիեզ. Պատմ. ևս. Բ. էջ 476, աղ. ՚ի վիեճակ, 1832:
 2. Agathange, Hist. du règne de Tiridate et de la prédication de S. Grég. Illuminateur, avec sopression des passages purement religieux, sur le texte arménien, accompagnée de la version grecque; Paris 1867.

հանգոյցի լուծուճը: Նորա կարծեօք ոչ այժմուս յունարէնն և ոչ հայերէնը կարեն լինել բնագիրօ — հայերէնը՝ ոչ թէ Գ. գարու գիւանական պատմութիւն է, այլ Ե գարուն Սրբոց վարուց խմբագրութիւն մի:

Գաղչիացի գիտնականին կարծիքը մասամբ մի եթէ սոյոք ևս համարինք. սակայն և այնպէս պէտք է ստել, ըստ առածին, « Միթէ բանիւ ինչ պատերազմն վճարիցի », ուր ոչ մի սպացոյց մէջ բերուած չէ, այլ որոտընդոստ պատգամք բանից՝ գաղչիական թագիով արձանկեալ:

Յամին 1877 ելու Քերճանիոյ հռչականուն քննադատն Ա. Գուալմիդ. որ թէ և իւր առանձին երկատիրութեանը՝ մէջ Լանգլու այի առաջին կարծեաց հակառակ՝ Միթաբեան Հորց հինաւուրց կարծիքն ընդունեց, այսինքն թէ, Ագաթանդեղեայ գիրքն՝ ի սկզբան անց հոյերէն գրուած էր. սակայն Գաղչիացոյն լոկ բանիւ արտայայտած երկրորդ կարծիքը՝ Գերճանացին անսովոր կորովով մասց և մեծ հմտութեամբ քաջ բարգաւաճից և ջանաց սպացուցանել, իրարմէ տարբեր եկեղեցական և աշխարհաւան տղերքներ յայտնելով Ագաթանդեղեայ գրոց մէջ: Գուալմիդ թէ այս աղբւրացս յայտնութեամբ և թէ կրեան հետնմանարուն հասուածոց ուշիժ բաղդատութեան մէջ մեծ արդիւնք ունեցաւ. սակայն պէտք է ստել, թէ նոյն տեսանական յարձակման և անձնական երթագրութեանցը շատ պատմական ճշմարտութիւններ և Հայաստանեայցս եկեղեցոյ նուիրական աւանդութիւնք ևս առաթուր եղան. որոց մասին եթէ մեք ևս ուզէինք լսել, տոհմային պատմութիւնը պիտի բողբոջեր ընդդէմ նորա: Նիւթս չի ներեր, և էս իսկ չեժ ուզեր ի ներածութեան ասա՝ նորա քննագատութեան բովանդակութիւն ընել՝ քայ յընթաց երկատիրութեան և ըստ պահանջելոյ հարկին՝ մէջ պիտի բերեժ նորա առանձին տեսութիւններն. որպէս զի մէկ կողմէն իրք ի հիմանց քննուած լինին, և միւս կողմէն այլ ընթերցողացս գաղափար մի առւած լինիժ՝ նորա գրութեան և կարծեաց մասին:

Հ. Գարեգին Վ. Զարթանաշեան՝ իւր Հայկական Ռին Դպրոցեան 2 մէջ, 181-213 յիջս ընդարձակարար և մեծ հմտութեամբ խօսած է Ագաթանդեղեայի վրայ, համաւաստելով նոյնպէս ներկոյ քննագատութեան յարուցած կարեօք հարցերն և առած վճիռները. բայց նոցա լուծուճի և իւր առանձին պատասխանին վերայիշեալ Գարութեան նախկին սպաղարութեան և իւր ուխտակից նախորդաց հնաւանդ կարծեաց համաձայն ուղած է յայլ, զորս արդի քննասէլք՝ թերեւս աւագ աչք զննած են զոչք ընդ արժանաւոր յարգանաց: Արդեօք մեծապատիւ հիգիւնկին սոյն այս գրութեան նպատակը թէ իւր պահպանողական զգուշաւորութիւնն ստիպէ իւր յառաջագոյն յայտնած կարծիքը պաշտպանելու՝ յետ նորանոր յայտնութեանց Գուալմիդի, այս՝ նմա միայնոյ է անկ. իսկ մեք զայս միայն պէտք է գիտենք, թէ բարձրագոյն ուսանողաց համար գրեց նո իւր գիրքն, որոնց պահանջածին համեմատ լուսագոյն փաստեր մէջ բերած է. որոնք կը ջուշնեն քաջիկ թէ այժմեան յունարէնը՝ հայերենէ թարգմանուած է, բայց ոչ նոյնպէս թէ Ագաթանդեղեոսը հայերէն լեզուով գրուած է. Նորա կարծիքով որովհետեւ Հայոց համար գրեց Ագաթանդեղոս իւր գիրքը, ուստի պէտք է որ հայերէն գրուած լինի: Այսպիսի ձեռնարկութեան պատասխանն արդէն ի վաղուց առւած են նոյնպէս Հայոց համար՝ բայց յունարէն և ասորերէն լեզուով գրուած այլ և այլ յիշատակարաններ:

1. Agathangelos von Alfred Gutschmid, Leipzig 1877.

5. Երկրորդ սպաղարութիւն յաւելուածներով և փոփոխութեամբք, Վենետիկ Միթաբեան սպարան, 1886:

Յիւղու եւք դարձեալ Կարապետ Թովմայեանի փոքրիկ բայց քովելի երկասիրու-
 թիւնը՝, յորում ինչպէս վերնագրէն իսկ կը տեսնուի, հեղինակը Արաթանդեղեայ
 պատմական մտերէն ուսիւն՝ վարգապետականին քննութեամբը պարապեր է: Սա-
 կայն նախընթաց գիտց մէջ՝ ըրած է լուսաւոր եւ արամի գիտազուծիւններն աւ Ագա-
 թանդեղեայ գրոց բնագրին եւ ազրբայց մասին, յաճախ ընթանալով զինի շուշաց
 Գուշապի, և ուրիշ ուրիշ սեփական կարծիս արտայայտելով, սակայն կամ ընդար-
 ձակ քննութեան միջոցներ և ժամանակ չունենալով, և կամ անձեռնհասութեան ա-
 զազաւ՝ պարտուպառաճ՝ փաստերով զանոնք ապացուցած չէ:

Մանօթ է ինձ նաև յամեն 1886 ըլստ տեսած Փիլիքոս Նչեի երկասիրութիւնը՝,
 որ հայկական Մատենագրութեան բովանդակութեամբը միշտնաւոր գործ է, սա-
 կայն Արաթանդեղոսի և նորա պատմութեան մասին ամենէն նոր բան մի չի ընծայեր:
 այլ անձային գրագէտ դասուն մէջ ըրող և հասարակայն կարծեաց արձագանգներ
 եւթ կուտայ մեզ, բայց ի մասնաւորի Արարանաշէանի Գրագրութեան պատմու-
 թեամբը բարգաւաճեալ:

Մինչև ցարդ մէջ բիրուած գրութիւններէն գտտելով կը տեսնենք որ Արաթան-
 դեղոսի գրոց մասին եղած քննադատք երկու տարբեր կուսակցութեանց բաժնուած
 են, օտարք, Լանգլուայի և Գուշապի հետ յարձակողական մի նոր գեր խողալով,
 իսկ անհային և անձային շեղուին ծանօթ եւրոպացիք օմանք՝ Մխիթարեան Հարց
 հետ պահանջողական գրութեամբ յառաջելով կը կոծին և մրցին, ունիւով ի միջի
 զոսկիխիտոր զոսկեգրիւ երկն Արաթանդեղեայ գրոց: Վերջինները՝ իւրեանց չայրենի
 հետաւոր յիշատակարանաց վրայ յարեալ և պանծացեալ՝ վարկպարօք յոմանց գու-
 ցէ թէ հնամուշ իսկ կոչեցան. սակայն առաջնոց քմահաճոյ աւերմունքը չի գործելէ
 զատ, ինչպէս փորձն ինքնին ցուցուց, ժամանակին աւակցութեամբը մեծամեծ ծա-
 ույտութիւններ ևս մատուցին մինչև ցայսօր անձային մտտերնագրութեան և պիտի
 չդադարին մատուցանել. վասն զի ժամանակեան նորութեանց և նոսրութեան ճարտար
 գործիչներ լինելով մէկ նշխար մի կամ նշմար չեն ուզեր վերցնել կամ փոփոխել, ա-
 ղանց նոցա տեղ փոխանակելի առձեռն պարտաստ նիւթեր ունինալու: Արդ յետ
 գրեմանցի քննադատին անցին տասն ամբ. այժմ հասած է, ըստ իս, ժամանակն և
 վաւական վայրկեանը. հրաւիրանաց զանգակը կը կուչի ի գործ. չարի է որ այս երկու
 կուսակցութիւններս իրարու միտք լաւ հասկնան և ոտն առ ոտն մտտենալով միմեանց
 ձեռք կարկանեն, նոր խորհուրդ մի երկնելու և նորակերտ շինուած մի կուսուցանելու
 Արաթանդեղոսեան գրոց աւանդութիւններէն և կամ զանոնք իւրեանց սկզբնական
 կացութեանը վերածելու համար, զոր եթէ երանգք դարուց և ժամանակաց աչքե-
 ցութիւնք կերպարանափոխեցին երբեք:

Արդ այն ժամանակին ի վեր երբ զառաջինն կարգուցի ևս Գուշապիք քննագա-
 տութիւնն Արաթանդեղոսի մասին, կը խոստովանիմ թէ մեծ զայրութեամբ միտա
 լեցուեցաւ, մտածելով որ օտարազգի մի կը յանդգնի մեաներէց լինել յապարեզ
 անդր հայկեանս դրակնութեան, և աղօտացնել մեր ամենէն աւելի պանծալի և պար-
 ծելի հեղինակին և նոյն հեղինակութեան արժանիքը: Սակայն զիտնալով քաջ թէ
 հայրենասիրական զգացմանց ջերմութիւնը հուրն է որ կը բորբոքէ յիս այդ բոցը և կու-
 զէ շուշակ իմ մտաց աչքերը՝ չի նկատել այն նորակերտ աշխարհը, զոր լուսամտա
 յայտնութիւնք ժամանակին ինձ ակնբեր կը պարզէին, և թէ այդ քննագրատը

1. Agathange et la doctrine de l'Eglise Arménienne en V. Siècle, Lausanne, 1879.
2. Agathangelos und die Akten Gregors von Armenien, Göttingen, 1887.

չէր ազեւտ ոճն և կամ անձնայակ Հայոց պատմութեան: Թոյլ տուի ժամանակ մի որ այդ բոցը հանդարտի. և յետ ժամանակաց վերստին ընթերցայ զայն տմե. նայն աշխարհութեամբ և առանց նախապաշարմանց: Այս երկրորդ ընթերցումը ոչ միայն նոր գազափորներն ծնուտ իմ մտացս մեջ, այլ նաև բուռն զօրութիւն մի ձեռք զարնելու այս գործիս: Ահա այս յորդորեցին զիս և արտաբերուս գեղեցիկ ակնկալութիւնք երեց կամ չորեք նպաստից. այսինքն է. նախ մեր վիճենական եզրորց Ա. գաթմոցեղեցայ պատմութեան ամենէն հնագոյն և կրկնագիր ձեռագրին, զոր ոչ ոք մինչև ցայսօր բաղդատեալու բաղքն ունեցու: Սակայն այս ակնկալութիւնս ի գերեւել. զի մինչև ցայժմ ոչ այդ յագարակի ծածկեալ գանձն և կրեալ մաստանը լոյս տեսու, և ոչ ես անտի օգտուելու բաղքին արժանացայ: Բ. Ա. Պօլսոյ Յունաց Սերու զոսի ատենապետ և հնագէտ Պապագոպուլուս Կերամեակ նոր գիւտն, զոր զտաւ ընն ծանոցել ինձ Ռիզայի Պրոֆ. Եմիլիոս Տէզա, 1886 գեկտեմբերին առ իս ուղղեալ Թղթով մի. Թէ վերոյիշուլ յոյն գիտնականը Մակեդոնիայ կոյսկինբու մեջէն գուրս բերեր է, յորս կը գտնուին յունարէն ձեռագրեր փոյներու մեջէն գուրս բերեր է, յորս կը գտնուին յունարէն Ագաթանգեղոսի բաղամտիւ հասուած ներս: Անձամբ տեղեկացոյ զսառգութիւն եղելութեանս և խնդրեց ի նմանէ այդ հասուածոց ընդօրինակութիւնը, բայց նա պաշտօնով յԵրուսաղէմ հաստատուած լինելով չկարաց իմ խնդրքը կատարել. բայց ցանկացեալ և պէտք եղած տեղեկութիւններն առնձինն նմանիւ ճաղորդեց ինձ, որով գէթ իրին ճիշդ եղելութիւնը կորացի իմանալ. Խորհատուալ յանձնարարական թուղթի ուղղեցի առ միանձունս վերոյիշեալ մեծատանին՝ պէսպէս խոստուճեցրով. սակայն յետ երկուց ամսոց, չգիտեմ այդ մեծատանին աշխարհքիս երեսէն ընդունին՝ եթէ թղթատուրաց բարեկարգութեան շնորհին, այդ թուղթն առ իս վերագործաւ: Այսպէս ուրեմն այս նպատակս ևս զրկուեցայ. բայց առանց կասելու շարունակեցի արգէն ի վաղուց սկսեալ իմ գործը. ունելով ի ձեռին բաց ի վնետական Ագաթանգեղեցայ կրկին հրատարակութիւններէն, նաև Կ. Պօլսոյ հին ապագրութիւնն ևս՝ հանգերձ քաւածիւ օրինակաց բաղդատութեանց յաւելուածներով, զոր կը կոչեմ Ա. Բ. Գ. Դ. և Եմ. Տէզայի մի փոքրիկ շրատարակութիւնն. որ է արգէնք Խորտար և արթ. նաթա բաղդատութեան փլորենտեան յոյն օրինակին՝ ընդ ապագրութեան Լանգլուայի: Բաց աստի, ոչ ինչ նուաջ նպաստամատոյց եղև ինձ նաև Բարբերինեան մասենոգարանի ձեռագրէն օրինակուած լատիներէն Ագաթանգեղոսն, որ ի քաւաքն յաւիտենական. և է — Ը զար գրուած կրկնագիր (palimpseste) յունա, բն ձեռագրի մի հաստուածները, զորս վերջերս գտնելով Վատիկանի գրատան մեջ Հ. Կոչցա Լուսցի և աղնուութեամբ շնորհեց ինձ, առ օր կը մատուցանեմ իմ երակս առպարտ շնորահակալութիւնս:

Հուսկ ուրեմն և ի վեր քան զակնկալութիւն իմ, հոյսս ի ձեռս իմ Գերմանիոյ, մասնաւոր թէ Եւրոպիոյ հանրածանօթ և մեծ բանասիրին Պ. Իրլապարգի գեա այն ինչ լոյս տեսած և բաղմամատակ և բաղմամատնձ հրատարակութիւնն՝, որ աւելի քան զամենայն նպաստամատոց ինձ եղև, և պէտք է որ ամէն ուսումնասիրի՝ բայց՝ ի մասնաւորի մերայնոց խորին ուշագրութեան առարկայ լինի: Մեծ գիտնականը վերջին այդ հրատարակութեամբ երկու ամենամեծ ծոռայութիւններ մատուցած է մեզ Հայոցս: Ա. վերստին ի լոյս ընծայելով զյունարէն Ագաթանգեղոս, բայց ոչ որպէս զնախոր.

1. L'Arménie chrétienne et sa littérature, Patrologie, p. 249-254, Louvain.

գրքս իւր. այլ իւր լէզու արանական, աստուածարանական և պատմական ընդարձակ համուժեամբը քաջ ուսումնասիրած է վերստին Փլուրենտեան ձեռագիրն, մանրակրթ. կիտ զնստեթեամբ ուղղագրած է նախընթաց հրատարակութեանց սխալ ընթերց. մունքը, նշանակելով ի ստորև նոցա տարբերութիւններն, յորս ոչ ինչ ընդհատ կը տեսնուին Պրոֆ. Տէգլայի նախնաբար և յետոյ ուրիշն այն ձեռագրին վրայ ըրած սրամիտ և ուղիղ գիտողութիւններն, զորս անազարտ պահած է Կիւրմանացին: Միով բանիւ նա լրացուցեր է Լանդուայի հրատարակութեան պակասաւոր միջոցներն, այնպէս որ կարելի է ասել, թէ մասամբ մի կատարուած է այժմ Իտալացի վերոյիշեալ բանասիրին և հայագիտի ցանկութիւնը, որ իւր փոքրիկ գրութեան մէջ կը փոփա. քեր հայերէն Ագաթանգեղոսին առընթեր տպուած տեսնել և նորա համապատասխա. նոց յունարէն օրինակն: Պարզք կը յամարիմ յիշել աստ մեծագրիւն գերմանացւոյն 'ի վերջկոյս իւր երկամիտութեան յասելալ յատուկ անուանչ լուսաբանութիւն և Ագաթանգեղեայ 'ի Ս. Գրոց 'ի կիր առեալ տեղեաց խնամոտ թուակարգութիւն. քը, յորս հաւասարապէս կը փայլին հինաւորց ծերունւոյն՝ անխոնջելի կորոնի և զարմանալի համբերութիւնն: Բ. 'ի լոյս ածեր է զՊատմութիւն գործոց Ս. Գրիգորի Լուսաւորչին Վատիկանեան մատենագարանի երեք ձեռագրիւներէն, զորս մինչև ցայն. վայր ոչ զք կարող եղած է ճանաչել, ըստ վկայութեան հեղինակին, և այս իսկ խորին կերպով իմ ուշադրութիւնս գրաւեց, թէպէտև արգէն ի վերջկոյս ժամանեալ էի գործոյս: Այլուր առիթ պիտի ունենամ այն գործի վրայ խօսել: Իսկ այժմ թէ երևե. լի գիտնական և թէ ես ուժգին կը յանձնեմք ազգայնոց զէթ գրագէտ գասուն, ստանալ և ընթեռնուլ երախտապարտ սրտիւ այգ օգտաշատ հրատարակութիւնն, մանաւոր թէ ցանկալի էր նորս հայերէն ճիշդ թարգմանութիւնն ևս՝ տեսնել 'ի լոյս ընծայեալ յազգիս:

Յընթաց գործոյս, մանաւանդ ի դժուարակնձիւն լուծումն կարեւոր խնդրոց թէւ պէտև ի խորհուրդ կուած եմ ստեպ զՓուսալիք, բայց նորա կարծիքը լաւ իմանալու համար և ոչ թէ ունեւոյ ինձ առաջնորդ. որովհետև ի բազում իրս և զէպս տարբեր են իմ տեսութիւնքս և սեփական կարծիք: Յառաջ քան զձեռնարկ գործոյս՝ իմ ա. ուղին ջանքն եղաւ ուշի ուշով քննել վերմանացի քննագասին թիւր հեանութեանց խարխուլ սկզբունքներն: Կորս գրութեան և քննագատութեան փորձաքարն է Ագաթանգեղոս և ագաթանգեղոսեան գրութեան մէջ պարունակուած ներքին հա. լաստիք. այնպէս զի կարելի է ասել, ըստ խոստովանութեան նորա, թէ Ագաթանգե. լոսով զԱգաթանգեղոս ուղեր և դասել: Իսկ ես ի մեծ զգուշութիւն ինձ և ի հաստա. առութիւն գործոյս՝ իմ քննասիրութեանցս ասպարէզն ընդարձակեցի նաև Գ. Ս և յաւըրգ գարուց տոհմային և տարազգի մատենագրաց վրայ, որոնք սերտ յարա. բերութիւն ունին ընդ Ագաթանգեղեայ և նորա աւանդութեանց հետ. բայց նախ քան զածելն զնոսա յապացուցութիւն աւանդելոցն յԱգաթանգեղոսէ, նոցա հարա. զտուութիւնը ջանացած եմ ապացուցանել: Այս սաժանելի գործողութիւնը՝ սի. բայժօժար փափաքանօք կատարեցի, ոչ միայն տպագիր հրատարակութեանց այլ մա. նաւանդ անտիպ ձեռագրաց վրայ, որոնց իրարմէ ունեցած զանազանութիւններն իսկ մեծ մտատանջութիւն կը պատճառեն քննասիրին, զոյգ ընդ ուրախութեան, Զտեսցիք եմ աչքէ անցնել զէթ վանացս ձեռագրատան բոլոր ճիւղերն իրենցն, Ու կեփորիկներն, Յայսմաւորքն և Տոնապատճաններն, յառաջագոյն խելամուտ լինելով ձեռնարկած նիւթոյս ծանրութեանն, որուն համար նոյնքան ձեռագիրք ևս հար. կաւոր են, նորք և առժամայն յայտնեալք 'ի մատենագրարանս ազգիս և առանձնա.

կանաց ոմանց. և ես մեծայրոյս մեծափափաք կը սպասեմ Նոցա՝ ցեժամ առանձին հրա-
աբարկութեան գործոյս, որ յետ ոչ բազմաց պիտի սկսի. մանաւանդ թէ գործս լի-
նելով գլխովին աղքատուէր, աղքայնոց կողմանէ ևս գրասուր ձեռնտուութիւնք և նը
պատեք յուսամ թէ չին զլացուիր՝ զայս յաջող կերպով աւարտելու և այլոց սկիզբն
առնելու համար:

Առաջիկայ գործոյս մէջ դարունակեալ և ընդարձակօրէն բարգաւաճեալ և լուծուած
առանձին գէպս և գժուարակնձիռն խնդիրներն զլեակարգութեանց բովանդակու-
թեանը մէջ պիտի տեսնեն ընթերցողք. իսկ ընդհանուրքն, որոնց վրայ իբրև յաշ-
ուանցրի պիտի հոլովի և յառաջէ քննադատութիւնս՝ են. Ա. Ագաթանգեղոսի իրա-
կան գոյութեան կամ ոչ գոյութեան խնդիրն, այսինքն է, Ագաթանգեղոսը անուն
իցէ՛ լեալ պատմական և ժամանակակից գրիչ Տրդատայ և Գրիգորի պատմութեան,
եթէ ընդհակառակն իմանալի է: Բ. Ագաթանգեղեայ պատմութիւնն ամբողջապէս
իցէ՛ արդեօք գործ քարտուղարին Տրդատայ գրեալ ՚ի սկզբն Գ. գարու, թէ ընդհա-
կառակն յայլ և այլ հեղինակութեանց և գործոց կաղմակերպուած խմբագրութիւն
մի: Գ. Ստուգիւ հայերէն լեզուով գրեցաւ այդ երկասիրութիւնը, ինչպէս կարծեն
Գուլաշիք և այլք ոմանք, թէ ընդհակառակն յունարէն: Դ. Այժմեան յունարէն
Ագաթանգեղոսն իցէ՛ արդեօք բնագիր հայերէնի, թէ ընդհակառակն սորա վրայէն
յետոյ ուրեմն եղած թարգմանութիւն: Ե. Լուսաւորչայ կարծեցեալ ընդարձակ
վարդապետութիւնը՝ ստուգիւ հարազատ իցէ, թէ գործ յեանագունի ուրումն
ժամանակաւ:

Ամենուն քաջածանօթ է այժմ, թէ Ագաթանգեղեայ գիրքն յերից մասանց կը
բաղկանայ, այսինքն է. առաջինը կը պարունակէ Տրդատայ, Գրիգորի և սրբոց
Հռիփսիմեանց նահատակութեան պատմութիւնը. երկրորդը՝ Լուսաւորչայ կարծե-
ցեալ վարդապետութիւնն. հուսկ երրորդը՝ Հայաստանի գործի պատմութիւնը:
Թող ներեն ինձ առ այժմ Հայսց լուսաւորութեան հօր հետ՝ նորա ջերմ սրբիքը
փոխադրելու այդ միջին կամ երկրորդ մասն՝ ի վերջ կոյս երրորդին, խոստանալով
որ գարծեալ կարելի է զետեղել իւր տեղ. նորա հեղինակութեան հետ ի միասին՝ բար-
գաւաճող և օրհնեալ ձեռքն և բերանն ևս մասննախը ընել և անգ ներմուծուելու
բուն պատճառն:

Հ. ԲԱՐՈՅՆ ԱՐԳՈՍԵԱՆ

Խ Ր Ա Տ Ք Խ Ի Կ Ա Ր Ի Ի

Որդեակ, թէ բարձր է շեմ ասն քո երկայն սրպէս կանգունն եօթն, յորժամ
մասնիցես՝ խոնարհչեց՞ զգլուխն քո:

Որդեակ, մի առնուլ մեծ կշռով և սալ փոքրով, և ասես թէ շահեցայ. զի ոչ տայ
Աստուած, այլ բարկացիք և գու սովամահ կորնչես:

Որդեակ, թէ ընկերն քո հիւանդանայ՝ մի ասեր թէ քնն ասնիմ նմա, այլ Երթ
ոտիւքք և տես աչօք. այն լաւ է նմա քան զհաղարս ոսկոյ և արծաթոյ:

